Արագածոտնի մարզպետի աշխատակազմն ու Թալինի համայնքապետարանը համատեղ կազմակերպում են «Արագածոտնի պատմամշակութային նկարագիրը» խորագրով հանրապետական գիտաժողովը, որը տեղի կունենա հունիսի 20-ին, Թալինում: Այն նվիրվում է թալինցի մերօրյա հերոս Միհրան Ասատրյանի հիշատակին: Գիտաժողովին մասնակցելու են հրավիրվում մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ, հայցորդներ, գիտաշխատողներ, որոնք պետք է հանդես գան զեկուցումներով: Զեկուցման ներկայացվող թեմաները պետք է վերաբերեն Արագածոտնին և ներառեն հետևյալ ուղղություններից որևէ մեկը.

• Հնագիտություն
• Պատմություն
• Նյութական և ոչ նյութ ական մշակութային ժառանգության պահպանություն
• Ժողովրդագրություն
• Ազգագրություն
• Պատմական հիշողություն
• Բարբառագիտություն
• Ճարտարապետություն
• Աշխարհագրություն
• Կրթություն
• Հոգևոր և մշակութային կենտրոններ
• Տպագրության պատմություն
• Բնական գիտություններ
• Հայաստան
• Զբոսաշրջություն
• Քաղաքագիտություն

Գիտաժողովի կարևորությունը բխում է ներքոնշյալ նպատակներից և ակնկալվող արդյունքներից. Նպատակներ՝

• Ընձեռել Արագածոտնի մարզին վերաբերող պատմական, աշխարհագրական, հնագիտական, ժողովրդագրական,պատմամշակութային ժառանգության պահպանման և այլ արդի հիմնախնդիրները վեր հանող ուսումնասիրությունների ստեղծման հնարավորություն,
• Հնարավորինս ներկայացնել Արագածոտնի ունեցած դերը տարածաշրջանի պատմական գործընթացների ձևավորման և զարգացման համակարգում,
• Համախմբել գիտության և կրթության տարբեր ոլորտների ներկայացուցիչներին՝ հաղորդակից դարձնելով նրանց վերոնշյալ բնագավառներում կատարվող հետազոտություններին և աշխատաքներին,
• Ստեղծել արծարծվող թեմաների քննարկման արդյունավետ, գիտական միջավայր: Ակնկալվող արդյունքներ՝
• Մերօրյա ընկալման և իմաստավորման համապատկերում Արագածոտնի մարզի պատմամշակութային նկարագրի ձևավորում,
• Նոր ուսմնասիրությունների հանրահռչակում և ամրապնդում
• Համապատասխան ոլորտների վերաբերյալ տեղեկատվության համախմբում և մեկտեղում:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես գալու համար խնդրում ենք լրացնել հետևյալ հայտը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը ապրիլի 25-ն է, հայտերի հաստատման վերջնաժամկետը՝ ապրիլի 30-ը: Գիտաժողովի օրակարգը կհրապարակվի մայիսի 5-ին: Գիտաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է: Նշված վերջնաժամկետից հետո ուղարկված և թեմայից դուրս հայտերը չեն ընդունվի: Գիտաժողովին ներկայացված զեկույցների ընտրանին կդիտարկվի տպագրման համար: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374)94-25-45-07, (+374)77-04-72-92, էլհասցե՝ gitajoghovaragatsotn@gmail.com :

Ներկայիս Արագածոտնը պատմական Մեծ Հայքի Այրարատ աշխարհի կենտրոնական Արգածոտն գավառի մաս է կազմել: Կոչվել է նաև Արագածի ոտն, Արագածոտան, Կողմն Արագածա և այլն: Իր տեղադրությամբ հանդերձ դարեր շարունակ պատմական կարևորագույն իրադարձությունների մասնակից է եղել: Ներկայումս ՀՀ մարզային կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր է՝ Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի տարածաշրջաններով: Այն հարուստ է նաև պատմամշակութային, ճարտարապետական, հոգևոր կոթողներով: Եվ այսօր անհրաժեշտություն է կազմակերպվելիք հանրապետական գիտաժողովի միջոցով մշակութային, գիտակրթական և հոգևոր աշխարհի ուշադրությունը ուղղել դեպի Արագածոտն: